ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Հանրապետության կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ելնելով երկու երկրներում գիտության և տեխնիկայի զարգացման շահերից,

առաջնորդվելով հավասարության և փոխշահավետության սկզբունքներով,

նկատի ունենալով, որ գիտատեխնիկական համագործակցությունը կնպաստի Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տնտեսական զարգացմանը,

անհրաժեշտ համարելով այդ համագործակցության զարգացման համար ստեղծել երկարաժամկետ հիմքեր,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կնպաստեն երկու երկրների միջև գիտատեխնիկական համագործակցության զարգացմանը, կորոշեն նման համագործակցության ուղղությունները և ոլորտները, ուշադրություն կդարձնեն համագործակցության այն ուղղությունների զարգացմանը, որոնք համապատասխանում են տվյալ ոլորտում երկու երկրների ազգային նախապատվություններին, գիտատեխնիկական համագործակցության համապատասխանեցմանը, առևտրատնտեսական համագործակցության խնդիրներին:

Հոդված 2

Սույն Համաձայնագրին համապատասխան՝ Կողմերի միջև համագործակցությունը կարող է ընդգրկել.

1) գիտական և տեխնիկական պատվիրակությունների, առանձին գիտնականների և մասնագետների փոխանակություն,

2) գիտատեխնիկական տեղեկությունների և փաստաթղթերի, ապրանքների ու նյութերի նմուշների, «նոու-հաու»-ների և արտոնագրերի փոխանակություն,

3) գիտատեխնիկական համաժողովների և գիտական կոնֆերանսների կազմակերպում,

4) համատեղ հետազոտությունների և մշակումների իրագործում, ինչպես նաև դրանց արդյունքների փոխանակում,

5) գիտատեխնիկական համագործակցության այլ ձևեր, որոնք կարող են փոխհամաձայնեցվել:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը կնպաստեն երկու երկրների համապատասխան գերատեսչությունների, կազմակերպությունների և ձեռնարկությունների միջև գիտատեխնիկական համագործակցությանը՝ սույն Համաձայնագրի շրջանակներում կնքված համաձայնագրերին կամ պայմանագրերին համապատասխան:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի իրավասու մարմիններ են նշանակվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարությունը, իսկ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից՝ ՉԺՀ գիտության և կրթության պետական կոմիտեն:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը համաձայնեցին, որ համագործակցության ընթացքում ծագող առևտրական, ֆինանսական և իրավաբանական բնույթի հարցերը պետք է մտցվեն առանձին արձանագրությունների և պայմանագրերի մեջ, որոնք կկնքվեն երկու երկրներում գործող օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց կամ իրենց ներկայացուցիչների կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված գիտատեխնիկական տեղեկությունները և փաստաթղթերը չփոխանցել որևէ երրորդ կողմի առանց այդ տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացրած Կողմի պաշտոնական համաձայնության:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրից և կգործի հինգ տարվա ընթացքում: Ամեն անգամ այն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամկետների համար, եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը սույն Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմին գրավոր չծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր ցանկության վերաբերյալ:

Կատարվել է Պեկին քաղաքում 1992 թվականի հուլիսի 4-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և չինարեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագրին կից ռուսերեն տեքստը հանդիսանում է աշխատանքային:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի հուլիսի 4-ից: